



http://cfoa.am

# Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Հունիս 2017, թիվ 6(106)

## Խմբագրական

### ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿՎԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում վարչական ղեկավարի պաշտոնի ներդրումը նոր մոտեցում էր համայնքի կառավարման գործընթացում: Վերջինիս ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված էր նոր բազմաբնակավայր համայնքների ձևավորմամբ և դրանց կազմում ընդգրկված բնակավայրերում համայնքային ծառայությունները բնակչությանը առավել հասանելի դարձնելու նկատառումով: Լինելով հայեցողական պաշտոն, նշանակվելով համայնքի ղեկավարի կողմից և պատասխանատու լինելով նրա առջեւ՝ վարչական ղեկավարը օժանդակում է համայնքի ղեկավարին՝ իրականացնելու իր լիազորություններն ու պարտականությունները տվյալ բնակավայրում: Փաստացի, վարչական ղեկավարը համայնքի ղեկավարի ներկայացուցիչն է բազմաբնակավայր համայնքի տվյալ բնակավայրում: Հատկանշական է, որ համայնքի ղեկավարն էլ, իր հերթին, պատասխանատու է վարչական ղեկավարի գործունեության համար:

Կառավարման տեսակետից վարչական ղեկավարի ինստիտուտի ներդրումը միանգամայն արդարացված կարելի է համարել: Վերջինիս լիազորությունների և գործառնությունների շրջանակը օրենքով սահմանված է, բավականին լայն է և բխում է տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի գործունեության ընդհանուր համատեքստից:

ՀՀ օրենսդրության մեջ վարչական ղեկավարի վերաբերյալ դրույթները անցած մեկ տարվա ընթացքում սկզբունքային փոփոխությունների ենթարկվեցին: Տեղական ժողովրդավարության տեսակետից առավել ուշագրավ է հետևյալը. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ ուժը կորցրած նախկին տարբերակում համայնքի ավագանուն էր վերապահված վարչական ղեկավարի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգի հաստատումը: Սա թույլ էր տալիս համայնքի ավագանուն սահմանել որոշակի կանոններ, համաձայն որոնց համայնքի ղեկավարը պետք է առաջնորդվեր վարչական ղեկավարի թեկնածությունը ներկայացնելիս: Այդ կանոնները կարող էին ներառել տվյալ համայնքում բնակիչների կարծիքի պարզում՝ հանրային քննարկումների կամ լսումների միջոցով: Սա համայնքի ղեկավարի մոտ հստակ պատկերացում կստեղծեր տվյալ բնակավայրում վարչական ղեկավարի թեկնածուի նկատմամբ ձևավորված վերաբերմունքի հարցում: Նույն այդ կարծիքին տեղյակ կլինեին նաև համայնքի ավագանին: Իսկ օրենքում այդ դրույթի բացակայության պայմաններում համայնքի ավագանին պարզապես զրկված է վարչական ղեկավարի թեկնածուի ներկայացման և նշանակման հարցում որեւէ միջամտությունից:

Գործող օրենքով համայնքի ղեկավարն արդեն միանձնյա է որոշում կայացնում վարչական ղեկավարի նշանակման հարցի վերաբերյալ: Եվ չի բացառվում իրերի այնպիսի դասավորություն, երբ վարչական ղեկավար նշանակվի մի անձ, որը տվյալ բնակավայրում, մեղմ ասած, չի վայելում բնակիչների վստահությունը:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ վարչական ղեկավարի պաշտոնը հայեցողական է, իսկ հայեցողական պաշտոնի դեպքում ՀՀ օրենսդրությունը նշանակման հարցում որեւէ սահմանափակում կամ ուղղորդում չի սահմանում: Հետեւաբար, հայեցողական պաշտոնում նշանակում կատարողը ազատ է թեկնածուի ընտրության հարցում:

Օրենսդրության փոփոխության արդյունքում տեղի ունեցավ կարեւոր առաջընթաց. վարչական ղեկավարը օրենքով իրավունք ստացավ հարց մտցնելու համայնքի ավագանու նիստի օրակարգ՝ կցելով հարցի ընդունման հիմնավորումը, նախագծի ընդունման դեպքում բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանքը և ամփոփաթերթ՝ նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների հետեւանքով ստացված առարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման պատճառների վերաբերյալ:

Հետեւելով ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում վարչական ղեկավարի ինստիտուտի կարճաժամկետ փորձին՝ կարելի է նախնական դիտարկումներ կատարել:

էջ 3 →

### ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ



Ինչպես հայտնի է, ս.թ. հունիսի 8-ին Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները: Վերջիններիս համաձայն՝ 328 համայնքների միավորման արդյունքում ձևավորվելու է 34 բազմաբնակավայր համայնք, իսկ նախորդ օրենսդրական փոփոխություններով արդեն ձևավորվել են 18-ը:

Համայնքների խոշորացման դրական և բացասական կողմերի, ինչպես նաև գործընթացի վերաբերող մի քանի հարցերի շուրջ «Համայնք-ՀամաՏեղը» գրուցեց «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի նախագահ Վահան Մովսիսյանի հետ:

**- Պարոն Մովսիսյան, այսօր վարչատարածքային բարեփոխումների գործընթացի կարեւորագույն ձեռքբերումների թվում առանձնացվում է համայնքի ավագանու ինստիտուտի կայացումը:**

էջ 2 →

### ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը անհրաժեշտություն առաջացրեց փոփոխել և լրամշակել «Համայնքների ֆինանսիստների միավորում» կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն օրենքում տեղ գտած նոր ձևակերպումների և պահանջների:

Կազմակերպության կանոնադրության մեջ, մասնավորապես, փոփոխվել է «Ընդհանուր դրույթներ» բաժինը՝ Կազմակերպության կարգավիճակը համապատասխանեցվել է Օրենքի սահմանմանը, նշվել են Կազմակերպության անգլերեն և ռուսերեն անունները, ինչպես նաև դրանց համարժեք հապավումները, սահմանվել է Համայնքների ֆինանսիստների միավորման պաշտոնական կայքէջը:

էջ 3 →

**Հայտարարություն**  
2017թ. հուլիսի 11-ին, ժամը 10:30, Երեւանի Թեքեյան կենտրոնում (Խանջյան 50) տեղի կունենա Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) իններորդ համաժողովը:

← էջ 1

- Եթե անդրադառնանք համայնքի ավագանու ձեռնարկին գործընթացներին եւ ավագանու ինստիտուտին, ապա ակնհայտորեն հաջողություններ ունենք: Եվ, եթե նախկինում դրանք միայն տեսական էին, ապա այսօր գործնականում էլ են երևում:

Նախկինում, երբ մի փոքր գյուղում ընտրվում էր 5 հոգուց կազմված ավագանի, ապա բնակիչներից շատերի համար միեւնույն էր, թե ով կլիներ այդ ավագանու կազմում, իսկ նիստերն էլ անցկացվում էին ոչ հաճախ ու ոչ ճիշտ պարբերականությամբ: Երբեմն էլ աշխատակազմի քարտուղարն ինքն էր այցելում ավագանու անդամների տները եւ առաջարկում էր՝ կարողա՞նք ստորագրել ավագանու որոշման նախագիծը: Նորություն չէ՝ նաեւ այն, որ բազմաթիվ համայնքներում համայնքապետներն էին ավագանու թեկնածուների ցանկը ներկայացնում համապատասխան ընտրատարածքային հանձնաժողով եւ նրանց փոխարեն էլ վճարում ընտրական գրավը: Պատճառը պարզ էր՝ փոքր գյուղ, փոքր բյուջե, հասարակական հիմունքներով աշխատանք. ձգտում դեպի այդ պաշտոնը չկար:

Սակայն նույնը չի կարելի ասել մեծ գյուղերի ու քաղաքների մասին: Բայց այստեղ էլ կար մեկ այլ խնդիր. մեծ ազակցական կապեր ունեցողը, բնականաբար, ավելի շատ քվեներ էր ստանում, իսկ ավելի խելոք, փորձառու թեկնածուն հաճախ դուրս էր մնում:

Հիմա, երբ համայնքը մեծացել է, եւ մեկ բնակավայրի ընտրողների քանակը բավարար չէ լրացնելու ավագանու անդամների բոլոր (9, 11 կամ 15) տեղերը, փոքր բնակավայրերը՝ լավ համախմբվելու դեպքում, կարող են ունենալ ներկայացուցիչ համայնքի ավագանու կազմում:

Այսօր կարող ենք արձանագրել, որ ավագանու որակը կտրուկ փոխվել է. ընտրում են ավելի ճարպիկին, բանիմացին, այն մարդուն, որը բնակավայրի շահերը լավագույնս կներկայացնի կենտրոնում:

Ավագանու նիստերը շատ բուռն են անցնում, հատկապես, երբ քննարկվում են տարեկան բյուջեն, ներդրումային ծրագրերը: Այստեղ ավագանու յուրաքանչյուր անդամ պայքարում է իր բնակավայրի շահերը պաշտպանելու եւ առաջ տանելու համար: Այսինքն՝ ավագանին դարձել է խնդիրներ վեր հանող, քննարկումներ իրականացնող մարմին, եւ սա ավագանու կայացման կարեւորագույն գրավականներից մեկն է, որ այս պահին որպես հաջողություն արձանագրում ենք:

Մյուս կարեւոր հանգամանքը համայնքի աշխատակազմի ձեռնարկմանն է վերաբերում: Ունենք բազմաթիվ դեպքեր, երբ համայնքի աշխատակազմը ձեռնարկվել է տվյալ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առավել փորձառու եւ բանիմաց նախկին աշխատակիցներից, ինչը նույնպես հաջողված փորձ է:

**- Վարչատարածքային բարեփոխումների ընթացքում տեղական ինքնակառավարման համակարգում ստեղծվեց նոր՝ վարչական ղեկավարի պաշտոնը:**

- Վարչական ղեկավարի պաշտոնի ներդրումը եւ նորությունն էր հայաստանյան իրականության մեջ, եւ նաեւ՝ տարաբնույթ կերպով մեկնաբանվող հարց:

Տեղական ինքնակառավարման մասին օրենքի նախնական տարբերակը սահմանում էր, որ բոլոր բնակավայրերը պետք է ունենան վարչական ղեկավարներ, բայց բնակչության որոշակի թվաքանակի դեպքում այդ լիազորությունները կարող էր իրականացնել նաեւ հարեւան բնակավայրի վարչական ղեկավարը: Այսօր դեռեւս շատ են այն համայնքները, որոնց բնակչության թիվը 50-ից չի անցնում, եւ այդ բնակավայրերում էլ, համաձայն գործող օրենքի, պետք է լինի վարչական ղեկավար, համարձակված սահմաններում սպասարկող անձ, բնականաբար, պետք է լինի նաեւ նստավայր, որի համար նույնպես պահանջվում են որոշակի ծախսեր: Այսինքն՝ ստացվում է, որ ոչինչ չի փոխվում:

# ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՅԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ



Վ. Մովսիսյանը գրուցում է Երեւանի փոխքաղաքապետ Վ. Արեւյանի հետ:

Վարչական ղեկավարը հայեցողական պաշտոն է եւ նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից: Պարզ է, որ վարչական ղեկավարը ընտրվի չի կարող լինել: Նրան չի կարող հաստատել նաեւ ավագանին, որովհետեւ այս դեպքում կառավարման հիերարխիայի խնդիրներ կառաջանան:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել նաեւ նշանակման կարգին: Նշանակում ասելով հասկանում ենք, որ համայնքի ղեկավարը պետք է դա ինքնուրույն անի, սակայն ճիշտ կլինի, որ սահմանված լինի նաեւ նշանակման կարգը: Վարչատարածքային բարեփոխումների վերջին փաթեթով, օրենքի փոփոխության արդյունքում նշանակման կարգի մասին դրույթը հանվեց: Ի՞նչ է սա՝ ազատություն՝ համայնքի ղեկավարին՝ իր ցանկությամբ նշանակում կատարելու: Նախկինում համայնքի ղեկավարը գոնե կարծիք էր ձեռնարկում, թե ինչպես են վերաբերվում բնակիչները տվյալ վարչական ղեկավարին: Համայնքի ղեկավարը միշտ էլ կարող է նշանակել եւ ազատել, բայց ներկայացման կարգ

սահմանել անհրաժեշտ էր թողնել ավագանու իրավասությանը:

**- Որքանո՞վ է ճիշտ նախկին համայնքի ղեկավարներին որպես վարչական ղեկավար նշանակելը:**

- Այս հարցը նույնպես խիստ մտահոգիչ է: Բազմաբնակավայր համայնքների մեծ մասում վարչական ղեկավար-

թյունների մեջ մտնող պաշտոնյաներ, իսկ ներքին խնդիրներով հիմնականում զբաղվել են համայնքապետարանի աշխատակիցները: Եվ, եթե վերջիններս նշված խնդիրները լավ են լուծել, ապա մեծ շանսեր կունենան ընտրվելու նոր ձեռնարկված (խոշորացված) համայնքի ղեկավար:

Ո՞վ է այսօրվա վարչական ղեկավարը: Նրա աշխատանքի ամբողջ ծավալը բնակավայրի ներսում է. չի ակնկալվում, որ նա պետք է բանակցի մարզպետարանի կամ դոնորների հետ: Նա բնակավայրի ներքին աշխատող է, որը պետք է զբաղվի բնակավայրի սոցիալ-տնտեսական հարցերով, բնակիչների համախմբելով, համայնքի ղեկավարի հետ անմիջականորեն աշխատելով:

Այստեղ եւս կա մի ցավոտ հարց. ենթադրենք տվյալ անձը նախկինում եղել է համայնքապետ, որն աշխատելով լավ կամ վատ, դարձել է այժմ այդ բնակավայրի վարչական ղեկավար: Եթե տվյալ բնակավայրում աշխատանքներն սկսեն առավել արդյունավետ իրականացվել, սա կնշանակի, որ այն ժամանակ ինքը վատ է աշխատել, եւ համայնքը խոշորացման փնջում ընդգրկվել է՝ ճիշտ էր: Այս երկու դեպքի համար էլ ներկայիս վարչական ղեկավարը բազմիցս ասել է, որ «սխալ են անում»: Այսօր նա չի կարող բացահայտ ընդունել, որ ինքն ավելի վատ է աշխատել, քան ներկայիս ղեկավարը: Այսինքն, նրանց ձեռնտու է, որ տվյալ բնակավայրի կառավարումը ձախողվի: Սա է պատճառը, որ վարչական ղեկավարները մեծ մասամբ ավելի շատ խանգարողներ են նոր ձեռնարկված համայնքում, իսկ սա իր հերթին նշանակում է, որ նոր ձեռնարկված համայնքի աշխատակազմում աշխատում են մարդիկ, որոնք դեմ են խոշորացմանը եւ այդ համայնքում դրական առաջընթաց գրանցելու:

Սա չի կարելի վերագրել բոլորին, բայց ուսումնասիրություններն ու դիտարկումները ցույց են տալիս, որ խնդիրը կա, եւ այս ուղղությամբ պետք է մտածել, մեխանիզմներ գտնել:

Բազմաբնակավայր համայնքների ղեկավարները նույնպես այն կարծիքին են, որ պետք չէր նախկին համայնքապետերին նշանակել վարչական ղեկավար-



Վ. Մովսիսյանը գործընկերների հետ «Մամուլի ակումբ-ՀամաՏեղ» հարողման նկարահանումների ժամանակ:

ներ նշանակվեցին նախկին համայնքապետերը, եւ միայն եզակի դեպքերում՝ այդ պաշտոնը տրվեց այլ անձանց:

Ընդհանուր առմամբ, ովքեր են եղել այդ նախկին համայնքի ղեկավարները: Նրանք եղել են համայնքի խնդիրները լուծող, մարզպետարանի, սոցիալական ծառայությունների հետ կապ պահպանող, ծրագրեր գտնող, համայնքը ներկայացնող մարդիկ, որոնք շատ դեպքերում չեն ունեցել նաեւ ստանդարտ աշխատաժամ: Մշտապես կապի մեջ են եղել հարեւան համայնքների ղեկավարների հետ՝ փորձելով ինչ-որ հարց լուծել միասին, այսինքն, նրանք ավելի շատ եղել են «դրսի» հետ շփվող, համայնքի մասով արտաքին փոխհարաբերու-

ներ, բայց հակառակն անել էլ չէին կարող, որովհետեւ նախկին գյուղապետերն ունեն բավական մեծ ընտրական ռեսուրս եւ աջակցել են համայնքի ղեկավարին:

Սա է նաեւ պատճառներից մեկը, որ չունենք կին վարչական ղեկավարներ: Իսկ կառավարման համակարգում կանանց ներգրավումը, իմ կարծիքով, ժողովրդավարության կարեւորագույն տարրերից մեկն է:

Լավ կլինի, որ հիմա կարողանանք վերլուծել այս բոլոր մտահոգիչ հարցերը, համակարգելք դրանք, գտնելու լուծումներ եւ բարեփոխումների հաջող փուլում սկսենք իրականացնել դրանք:

# ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

← էջ 1

Բազմաբնակավայր համայնքի բնակավայրերում վարչական ղեկավարներն ունեն նստավայր, որը սահմանում է ավագանին: Նույն այդ նստավայրում աշխատում է գանձապահ-օպերատորը, որը պետք է տվյալ բնակավայրում իրականացնի հարկահավաքում, պատրաստի եւ բնակիչներին տրամադրի անհրաժեշտ տեղեկանքներ, քաղվածքներ, համակարգչի միջոցով կապ պահպանի համայնքի կենտրոնի հետ եւ այլն:



Փոքր բնակավայրերում, որտեղ բնակչությունը չի գերազանցում 100-ը, մեծ հաջողությամբ կարելի է վարչական ղեկավար նշանակել այնպիսի անձի, որը տիրապետում է համակարգչին եւ կարող է իրականացնել նաեւ օպերատորի պարտականությունները: Սա առաջին հերթին հնարավորություն կտա բյուջետային միջոցների խնայողություն իրականացնել: Գործնականում ակնհայտ է, որ փոքր բնակավայրում վարչական ղեկավարի աշխատանքային ծանրաբեռնվածությունը մեծ չէ, եւ վերջինս, համապատասխան ունակությունների առկայության դեպքում, լիարժեքորեն կարող է իրականացնել նաեւ օպերատորի գործառնությունները՝ առանց թերանալու մյուս պարտականությունների կատարման հարցում:

Վերաբերում: Տեղական ինքնակառավարման մասին օրենքի նախկին տարբերակում վարչական ղեկավարներ պետք է նշանակվեին այն համայնքներում, որտեղ բնակչությունը 100-ից ավելի էր: Այժմ այդ սահմանափակումը հանվել է, եւ համայնքի բոլոր բնակավայրերում, բացի կենտրոնից, պետք է լինեն վարչական ղեկավարներ: Հիմնվելով դիտարկումների վրա՝ կարծում ենք, որ կառավարման տեսանկյունից ավելի արդյունավետ կլինեք սահմանել 100-ից ավելի բնակիչ ունեցող համայնքներում վարչական ղեկավարի պարտադիր նշանակվելը, իսկ 100-ից քիչ բնակիչ ունեցող բնակավայրերում վերջիններիս նշանակումը թողնել տեղական իշխանությունների, մասնավորապես՝ համայնքի ավագանու հայեցողությանը: Սա հնարավորություն կտար տեղական

իշխանություններին ինքնուրույն ընտրել փոքր բնակավայրերի կառավարման մոդելը եւ այդ բնակավայրերում վարչական ղեկավար ունենալու կամ չունենալու արդարացված լինելը:

Վարչական ղեկավարի ինստիտուտը կարող է եական դեր խաղալ բազմաբնակավայր համայնքի կառավարման արդյունավետության գործում, եւ շատ կարելու է, որ ՀՀ օրենսդրությունը հնարավորություն ստեղծի տեղական իշխանությունների համար ավելի նպատակային օգտագործել այդ գործիքը՝ համայնքի բոլոր բնակավայրերը համաչափ զարգացնելու հարցում:

Վ. Մովսիսյան  
Վ. Շահբազյան  
Ղ. Մարգարյան  
Խմբագրական խորհրդի անդամներ

# ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻԱՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

← էջ 1

Կազմակերպության գործունեության առարկան եւ նպատակները բաժնում հստակեցվել է կազմակերպության գործունեության առարկան, ավելացվել եւ հստակեցվել են նպատակները՝ հիմք ընդունելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ը, որը հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռում իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Այս բաժնում ավելացվել է նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացների դիտարկման եւ մոնիտորինգի նպատակ եւ գործառնություն, որը հնարավորություն կստեղծի դիտորդություն իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում:



Ժամանակահատվածը, որը սահմանվել է 3 տարի: Համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 20-ի 1-ին կետի, «1. Հերթական ժողովները գումարվում են Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ, սակայն ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անգամ»:

- Կանոնադրության մեջ ավելացվել է «Կազմակերպության շահառուները» բաժինը: Ըստ Կանոնադրության, կազմակերպության շահառուներն են հանդիսանում՝
  - Համայնքային ծառայողները,
  - Զաղաքացիական ծառայողները,
  - Տեղական ինքնակառավարման ոլորտի փորձագետները եւ մասնագետները,
  - Միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստա-

ությունների ուսանողները,

- Տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները եւ խմբերը,

- Տեղական ինքնակառավարման ոլորտում քաղաքականություն իրականացնող պետական լիազոր մարմինը,

- Համայնքների բնակիչները, տեղական ինքնակառավարման մարմինները, աշխատակազմերը:

Կազմակերպության կանոնադրության մեջ առանձին բաժին ավելացվել է կամավորների, նրանց իրավունքների եւ պարտավորությունների վերաբերյալ: Բաժնում սահմանվել են՝ կամավորությունը, կամավորի հետ Կազմակերպության փոխհարաբերությունները, աշխատանքային պայմանները, նրանց փոխհատուցման եւ վարձատրության խնդիրները:

Կանոնադրության նշված փոփոխությունները կքննարկվեն Համայնքների ֆինանսիստների միավորման՝ 2017թ. հուլիսի 11-ին կայանալիք Համաժողովում: Մանրամասն Կանոնադրության փոփոխություններին կարող եք ծանոթանալ [www.cfoa.am](http://www.cfoa.am) կայքում տեղադրված նախագծից:

Աբրահամ Արտաշեսյան  
ՀՀՄ փոխնախագահ

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար օրենքից բխող պահանջները արտացոլվել են նաեւ Կանոնադրության այլ բաժիններում՝ ըստ անհրաժեշտության: «Կազմակերպության կազմակերպական կառուցվածքը եւ կառավարումը» բաժնում վերանայվել է Համաժողովի հերթական անցկացման, ինչպես նաեւ Կազմակերպության կառավարման մարմինների ընտրության

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓՈՎԻՉ ՀԱՄԱԺՈՂՈՎ

2017թ. հունիսի 16-ին, Գյումրու Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում կայացել է Հայաստան-Վրաստան. Արեւելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության (ԱԳՏՀ) աշակցության ծրագրի 5-րդ պաշտոնական եզրափակիչ համաժողովը: Համաժողովը մեկնարկել է ցուցահանդեսով, որին ներկայացվել են «Երիտասարդների զբաղվածության ընդհանուր մարտահրավերների լուծում» միջսահմանային միասնական զբոսաշրջություն», «Ընդհանուր լուծումներ միասնական հիմնախնդիրներին», «Հեծանվային եւ գյուղական միջսահմանային միասնական զբոսաշրջություն» եւ այլ ծրագրեր: ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման (ՏԿԶՆ) նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, Վրաստանի տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, Վրաստանի պատվիրակության նախագահ Իրակլի Մատկավան, Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը, Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը եւ այլ հյուրեր շրջել են տաղավարներում, ծանոթացել իրականացված աշխատանքներին:

Ցուցահանդեսին հաջորդած մամուլի ասուլիսից հետո հյուրերը մասնակցել են «Ազդեցություն մարզային կայուն զարգացման եւ միջսահմանային համագործակցության վրա» խորագրով կոնֆերանսին:

Ամփոփելով ԱԳՏՀ ծրագրի շրջանակներում Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրի արդյունքները՝ ՀՀ ՏԿԶՆ փոխնախարար Վ. Տերտերյանը նշել է, որ այն զգալի կերպով բարելավել է երկու երկրների միջեւ փոխըմբռնումը, գործարար կապեր ստեղծելով, հիմք դնելով համագործակցային նոր ծրագրերի: «Ծրագրի մասնակից 9 միջսահմանային թիմերը կարող են հպարտանալ այն նշանակալի ձեռքբերումներով, որոնք նպաստել են սահմանակից մարզերի զարգացմանը եւ զգալի օգուտ են բերել համայնքներին: Ծրագրի իրականացմանը մեծապես նպաստել է Եվրոպական միությունը: Վստահ եմ՝ ծրագրի շրջանակներում համատեղ արձանագրած արդյունքը կարելու խթան կլինի տարածքային համագործակցության հետագա զարգացման համար», - ասել է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալը:

«Ես շնորհակալություն եմ հայտնում Եվրամիության մեր բոլոր գործընկերներին ու բարեկամ երկրների ներկայացուցիչներին: Վստահորեն նշում եմ, որ մեր մարզը պատրաստ է բոլոր ջանքերը, հնարավորությունները, կարողությունները, եռանդը ներդնել, որ նոր ծրագրեր կյանքի կոչվեն, եւ մեր երիտասարդները, երիտասարդ կազմակերպությունները կայանան, ինքնադրստեղծվեն», - ասել է Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը:

Հայաստան-Վրաստան տարածքային համագործակցության ծրագրում Հայաստանից ներառված է 9135 քառ.կմ տարածք, իսկ Վրաստանից՝ 12,941 քառ.կմ: Ծրագրում ներառվել են հայ-վրացական սահմանի 225 կմ երկայնքով տեղակայված շրջանները՝ Հայաստանի Լոռու, Շիրակի եւ Տավուշի մարզերը եւ Վրաստանի Զլեմո-Զարթլին եւ Սամցխե-Ջավախեթին: Ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է 2014թ. նոյեմբերին: Համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանում եւ Վրաստանում գործող 33 կազմակերպությունների կազմված 9 միջսահմանային կոնսորցիումների տրամադրվել են դրամաշնորհեր՝ լուծումներ առաջարկելու տարածքային զարգացման տարատեսակ հիմնախնդիրներին:

**Հարգելի ընթերցող,**  
Ի՞նչ եք մտածում ամեն անգամ «Համայնք-ՀամաՏեղ» թերթը բացելիս, ի՞նչ ակնկալիքներ ու սպասումներ ունեք, ինչի՞ մասին եք ցանկանում կարդալ, բայց չեք գտնում այստեղ: Թերթի մասին ձեր կարծիքը շատ կարելու է մեզ համար:  
Գրեք մեզ հետևյալ հասցեով՝ *Երեւան, Երվանդ Զոհարի 20, 4-րդ հարկ կամ [madamyan@cfoa.am](mailto:madamyan@cfoa.am)* էլ. փոստին:



# ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ



ԱՐԱԳԱԾՈՆՆ

2017թ. հունիսի 12-ին ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզպետարանում տեղի ունեցավ «Համայնքների պաշտոնական համացանցային կայքերը (մասնակցային էլեկտրոնային գործիքներ և դրանց կիրառման առանձնահատկությունները. Արագածոտնի մարզի համայնքների կայքերի օրինակը)» թեմայով սեմինար-քննարկում: Մասնակցում էին Արագածոտնի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, Արագածոտնի մարզպետարանի, «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» (ՏՀՎԿ) ՀԿ-ի աշխատակիցներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՏՀՎԿ նախագահ Գրիշա Խաչատրյանը: Բանախոսը ներկայացրեց միջոցառման օրակարգը, նպատակները և ակնկալվող արդյունքները:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Արագածոտնի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Սիրազ-Իկ Հովսեփյանը:

Վերջինս կարեւորեց տեղեկատվական համակարգերի դերը համայնքապետարանի աշխատանքների կազմակերպման գործում, հորդորեց համայնքապետարանների աշխատակազմերին ավելի ակտիվ շահագործել «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը» (ՀԿՏՀ), լուծել

համայնքային կայքերի համացանցային հասանելիության, դոմեյնային անունների հարցերը:

ՏՀՎԿ նախագահ Գրիշա Խաչատրյանը ներկայացրեց զեկուցում «Համայնքների պաշտոնական համացանցային կայքերը (մասնակցային էլեկտրոնային գործիքներ և դրանց կիրառման առանձնահատկությունները. Արագածոտնի մարզի համայնքների կայքերի օրինակը)» թեմայով: Մասնավորապես, անդրադարձ եղավ համայնքապետարաններում շահագործվող ՀԿՏՀ էլեկտրոնային մասնակցային գործիքներին, ինչպես նաեւ օրենսդրական փոփոխությունների արդյունքում ծրագրված՝ համակարգի լրամշակման հարցերին:

Համայնք առ համայնք ներկայացվեցին ՀԿՏՀ մշտադիտարկման արդյունքները, վերահսկվեցին ընդհանրական խնդիրները, մատնանշվեցին դրանց լուծման եղանակները: Որպես օրինակ էլի կայքեր, մատնանշվեցին Աշտարակի համայնքապետարանի [www.ashtarak.am](http://www.ashtarak.am) և Ապարանի համայնքապետարանի [www.aparan.am](http://www.aparan.am) կայքերը:

Այնուհետեւ Ապարանի և Աշտարակի համայնքապետարանների ներկայացուցիչները ներկայացրին հաջողությունների իրենց փորձը, աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

ՏՀՎԿ-ի աշխատակից Ռոբերտ Գրիգորյանը ներկայացրեց ՀամաՏեղ ծրագրի համացանցային պորտալը՝ [www.celog.am](http://www.celog.am), նրա դերն ու գործառնական հնարավորությունները, ինչպես նաեւ՝ ՀամաՏեղ-ի ֆեյսբուքյան էջը: Վերջինս ընդգծեց, որ այդ ռեսուրսները մեծ ծավալի տեղեկատվություն են պարունակում ՀՀ ՏԻՄ ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ:

Այնուհետեւ մարզպետարանի ներկայացուցիչ և համայնքապետարանների աշխատակիցների միջեւ ծավալվեց մտքերի փոխանակություն և ճակատագրի խնդիրները լուծման ուղղությամբ:

Միջոցառման ավարտին Գրիշա Խա-

չատրյանն ամփոփեց սեմինարի արդյունքները, հայտնեց համագործակցելու պատրաստակամություն, հորդորեց աշխատանքի ընթացքում առաջացած յուրաքանչյուր խնդրի կամ նոր գաղափարի դեպքում դիմել ՏՀՎԿ ՀԿ:

## ՇԻՐԱԿ

Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը (ՏՀՎԿ) հունիսի 27-ին Շիրակի մարզպետարանում կազմակերպել է «Համայնքների պաշտոնական համացանցային կայքերը՝ մասնակցային էլեկտրոնային գործիքները և դրանց կիրառման առանձնահատկությունները. Շիրակի մարզի համայնքների կայքերի օրինակը» թեմայով սեմինար-քննարկում:

Քննարկման մասնակիցներին ողջունել է Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը, որը կարեւորել է արդիական տեղեկատվական համակարգերի և համայնքների պաշտոնական կայքերի արդյունավետ շահագործումը: «Այսօրվա տեղեկատվական անդադար հոսքերի դարաշրջանում չափազանց կարեւոր է օպերատիվ աշխատանքը, պետք է ամեն հնարավորությամբ օգտագործել աշխատանքի թափանցիկությունն ապահովելու համար, խոսքը ինչպես ավագանու նիստերի հեռարձակմանն է վերաբերում, այնպես էլ քննիչների հետ հետադարձ կապին, ինչը հնարավորություն կտա լսել քաղաքացիներին, իմանալ նրանց կարծիքներն առավել արագ են պատասխանել,- նշել է Շիրակի մարզպետը:

Սեմինարի ընթացքում ներկայացվել են Շիրակի մարզի համայնքների կողմից համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի և համայնքների պաշտոնական կայքերի շահագործման մշտադիտարկման արդյունքները, մասնակիցները հնարավորություն են ունեցել ներկայացնել կայքերի գործարկման ընթացքում առաջացած խնդիրները, հարցադրումներով դիմել մասնագետներին:

Սեփ.լր.

## ՍԵՄԻՆԱՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԸՅԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Երեւանի մամուլի ակումբը Համատեղ ծրագրի շրջանակներում ս.թ. հունիսի 11-13-ին կազմակերպել էր սեմինար «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխությունները և գործընթացի լուսաբանման խնդիրները» թեմայով:

Լրագրողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին նախ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը ծանոթացրեց «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում նախատեսվող փոփոխություններին, ինչպես նաեւ մասնակցեց իր զեկուցմանը հաջորդած բուն քննարկումներին և պատասխանեց ներկաների հարցերին:

«Հետք» ինտերնետային պարբերականի թղթակից Երանուհի Սողոյանը ներկայացրեց ՏԻՄ գործունեության լուսաբանման իր փորձը՝ այդ լուսաբանումը դիտարկելով որպես հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացման աղբյուր: ՏԻՄ-ԱԼՄ համագործակցության իրենց յուրահատուկ փորձը ներկայացրեց «Գեղամա» հեռուստաընկերության տնօրեն Սուրեն Բարսեղյանը, ՀամաՏեղ ծրագրի հանրայնացման գործիքներից «Մամուլի ակումբ-ՀամաՏեղ» հեռուստահաղորդակցությունը, անցած եթերաշրջանի տեսությամբ, ներկայացրեց հեռուստահաղորդաչափի պրոդյուսեր Հերիքնազ Հարությունյանը:

Համայնքների խոշորացման գործընթացի 2-րդ փուլի առավելությունների և մտահոգությունների մասին էր Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) նախագահ, ՀամաՏեղ ծրագրի տնօրեն Վահան Մովսիսյանի զեկուցումը: Վերջինս ներկայացրեց նաեւ գործընթացի մասին մի քանի խեղաթուրումները՝ մամուլում վերջերս հրապարակված փորձագիտական մի հոդվածի օրինակով: Իսկ համայնքների խոշորացման վերաբերյալ մամուլում հնչած մտահոգություններին առավել մանրամասն անդրադարձ կատարեց ՀՖՄ փորձագետ Դավիթ Սարգարյանը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ն (ՀՖՄ) համընկերության 5 կազմակերպությունների հետ շարունակում է իրականացնել ՀամաՏեղ ծրագիրը, որի շրջանակներում յուրաքանչյուր տարի իրականացվում է փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթ: Այն իրականացվում է արդեն երկրորդ անգամ, և նպատակն է նպաստել քաղաքացիների ակտիվ և իրազեկ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը (ՏԻ): Այս տարի փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի մասին ապրիլի 27-ին հայտարարություն տեղադրվեց ՀՖՄ կայքում, ինչպես նաեւ «Համայնք-Համատեղ» ամսաթերթի ապրիլի համարում: Իսկ հայտերի ընդունման վերջնաժամկետ սահմանվեց մայիսի 19-ը:

Մրցույթի հայտարարությունում նշվել էր, որ առաջարկվող փոքր դրամաշնորհների ծրագրերը կարող են լինել տեղական ինքնակառավարման մասնակցային մեխանիզմների կիրառման, համայնքային խնդիրների բացահայտման և բարձրաձայնման, ՏԻ բարեփոխումների, ապակենտրոնացման և համայնքների խոշորացման, ՏԻ ոլորտին առնչվող օրենսդրական դաշտի մասնակցային ուսումնասիրության, վերլուծության, ինչպես նաեւ ՏԻ-համայնքի բնակչություն հաղորդակցության որակի բարելավման թեմաներով:

Ի սկզբանե սահմանվել էր, որ մեկ դրամաշնորհի համար ՀՖՄ-ի կողմից կտրմադրվի մինչև 3 մլն դրամ գումար,

# ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ. ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՄՈՏԵՆՈՒՄ Ե ԱՎԱՐՏԻՆ

Իսկ այն ծրագրերը, որոնք կնախատեսվեն իրականացնել ՀամաՏեղ ծրագրի մեկից ավելի թիրախային համայնքներում, կֆինանսավորվեն մինչև 4 մլն դրամի սահմաններում:

ՀՖՄ-ն սահմանեց Փոքր դրամաշնորհային ծրագրերի գնահատման կարգ և ձևավորեց համապատասխան հանձնաժողով, որի վրա դրվեց բոլոր հայտերի մանրամասն ուսումնասիրման, գնահատման և հաստատման պարտականությունները:

Մրցույթի շրջանակներում ստացված հայտերի քննարկման սկզբնական փուլում ուսումնասիրվում էին դրանց փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունը մրցույթի ընդհանուր տեխնիկական պահանջներին: Ընդհանուր առմամբ, մրցույթի սահմանված ժամկետի ավարտին ստացվել էր ընդամենը 42 դրամաշնորհային հայտ: Դրանցից մրցույթի ընդհանուր պահանջ-

ներին բավարարեցին 35-ը, որոնք էլ հանձնաժողովի որոշմամբ, անցան գնահատման հաջորդ փուլ: Այս փուլում ծրագրի փորձագետների կողմից մանրամասն ուսումնասիրվեցին դրամաշնորհային հայտերում ներկայացված ծրագրերը, դրանց համապատասխանությունը մրցույթի ծրագրային պահանջներին և իրականացման իրատեսականությունը և ռիսկերը:

ՀՖՄ-ի 4 փորձագետներն առանձին-առանձին գնահատեցին բոլոր 35 դրամաշնորհային հայտերը՝ ըստ նախօրոք մշակված գնահատման չափանիշների: Գնահատման նախնական արդյունքներով, ՀամաՏեղ ծրագրի շրջանակում հայտարարված փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթում լավագույնը ճանաչվեցին հետեւյալ կազմակերպությունների և նախաձեռնող խմբերի կողմից ներկայացված ծրագրերը՝

1. «Գեղարեգ» կրթամշակութային ՀԿ
2. «ԿԱՄԵ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն ՀԿ
3. Իջեւանի տարածաշրջանի համայնքների միություն
4. «Հուլիսի Մեծամոր» հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող ՀԿ
5. «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
6. Գորիսի «Դինամիկա» ԸՆԻ
7. «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ
8. «Ընտանիք և համայնք» ՀԿ

Վերոնշյալ կազմակերպությունների և նախաձեռնող խմբերի ծրագրերից ֆինանսավորման ենթակա ծրագրերի վերջնական կազմը կորոշվի դրանց կարողությունների ուսումնասիրման և դրամաշնորհային հայտերի բյուջեների շուրջ բանակցությունների և փոխհամաձայնեցման արդյունքում: Հնարավոր է նաեւ, որ բանակցությունների արդյունքում 2 դրամաշնորհային հայտերի գործողությունները միավորվեն մեկ ծրագրում և ֆինանսավորվեն որպես մեկ դրամաշնորհային ծրագիր:

Մոտ ապագայում ՀՖՄ գնահատող հանձնաժողովին կներկայացվեն բանակցությունների արդյունքները, որոնց հիման վրա էլ հանձնաժողովն իր որոշմամբ կհաստատի 2017թ. Փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի վերջնական արդյունքները:

Փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի հանձնաժողով

# ԷԼ-ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈՐՁԸ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԷՍՏՈՆԻԱՅՈՒՄ



Ս.թ. հունիսի 15-ին «Մասնակցային կառավարման փորձի ուսումնասիրություն» Արեւելյան գործընկերության երկրներում» համեմատական վերլուծության իրականացման շրջանակներում Էստոնիայի Էլ-կառավարման ակադեմիայի ներկայացուցիչներն այցելեցին

Հայաստան եւ հանդիպեցին ՀամաՏեղ համընկերության ներկայացուցիչների հետ: Էստոնացի փորձագետների հետազոտության նպատակն է ուսումնասիրել Արեւելյան գործընկերության երկրների մասնակցային կառավարումը՝ հատկապես Էլեկտրոնային կառա-

վարման մեխանիզմները եւ հանդես գալ մասնակցայինությունը խթանող առաջարկներով:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին եւ քննարկվեցին տեղական ինքնակառավարման ոլորտում մշակված եւ արդեն իսկ կիրառություն ստացած հանրային մասնակցությունը խթանող մեխանիզմները, մասնավորապես՝ Էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառման փորձը Հայաստանում եւ Էստոնիայում:

Էստոնական Էլեկտրոնային կառավարման համակարգն ինտեգրում է տարբեր ոլորտների տվյալների պահուցները, այդպիսով հնարավորություն տալիս քաղաքացիներին հեշտությամբ գտնել իրենց անհրաժեշտ տվյալները, կատարել վճարումներ, մասնակցել կառավարման գործընթացներին՝ օգտվելով ընդամենը մեկ համակարգից:

ՀամաՏեղ ծրագրի փորձագետները ներկայացրին ծրագրի շրջանակներում առցանց հարթակների օգտագործման փորձը ոչ միայն գոյություն ունեցող պաշտոնական կառավարման համակարգի կիրառման տեսանկյունից, այլ նաեւ՝ սոցիալական ցանցերի եւ քաղաքացիական լրագրության առցանց հարթակների միջոցով: Էստոնացի փորձագետներին հատկապես հետաքրքրեց Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀՎՏՀ) համայնքային կառավարման ցանցայինության մեխանիզմը: Այն հնարավորություն է ընձեռում համակարգից օգտվող

տարբեր համայնքների ՏԻՄ աշխատակիցներին հողորդակցվել իրար հետ, ստեղծել թեմատիկ խմբեր եւ այլն: Հյուրերին ներկայացվեց նաեւ ՀամաՏեղ ծրագրի պորտալը, վերջինիս գործիքակազմը՝ որպես տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, ինչպես նաեւ իրազեկվածության բարձրացմանը նպաստող հարթակ:

Էստոնացի փորձագետները պատմեցին մասնակցային կառավարման իրենց փորձի մասին եւ հիշատակեցին Էստոնական Տարտու քաղաքի մասնակցային բյուջետավարման ծրագիրը: Այն հնարավորություն է տալիս համայնքում ներկայացնել ծրագրեր եւ օւլայն ու օֆլայն քվեարկությամբ ընտրել դրանցից լավագույնը, որն իրականացվում է համայնքի բյուջեի միջոցով: Այս փորձի հաջող կիրառումը հնարավորություն է ընձեռել մասնակցային բյուջետավարումը իրականացնել նաեւ Էստոնական այլ քաղաքներում: Էստոնացի փորձագետները նշեցին նաեւ Էլեկտրոնային ստորագրության լայն կիրառումը՝ որպես մասնակցայինությանը նպաստող գործիք եւ քննարկեցին վերջինիս առավելությունները ու կիրառման տեխնիկական խոչընդոտները:

Սա ՀամաՏեղ ծրագրի համընկերության եւ Էլ-կառավարման ակադեմիայի թվով 2-րդ հանդիպումն էր: 2016թ. աշնանը ՀամաՏեղ ծրագրի թիմը Էստոնիա կատարած այցի շրջանակներում մի շարք կազմակերպություններից գատ հանդիպել էր նաեւ Էլ-կառավարման ակադեմիայի փորձագետներին: Հանդիպման արդյունքում Հայաստանում համայնքային կառավարման Էլեկտրոնային համակարգում կիրառվեցին սոր գործիքներ, ինչը նպաստեց համակարգի ցանցայինության ապահովմանը եւ օգտատերերի համար առավել մատչելի գործիքների ներդրմանը:

Սեփ.լր.

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) «Հարավային Կովկասում պատշաճ տեղական ինքնակառավարման ծրագիրը» այս տարվա ապրիլ-մայիս ամիսների ընթացքում հայտարարեց եւ անցկացրեց համայնքներին տեխնիկական աջակցության երկու դրամաշնորհային ծրագրերի մրցույթ: Դրանք վերաբերում են 2015-2016 թվականների ընթացքում սոր ձեւավորված 18 բազմաբնակավայր համայնքների ավագանիների կողմից արդեն հաստատված հնգամյա զարգացման ծրագրերի հիման վրա տարեկան աշխատանքային պլանների (ՏԱՊ) եւ ծրագրային բյուջեների (ԾԲ) մշակման, քննարկման եւ հաստատման գործընթացների պատշաճ մակարդակով կազմակերպմանը եւ իրականացմանը: Մրցույթների ամփոփման արդյունքներով, վերոնշյալ երկու ծրագրերի էլ հաղթող ճանաչվեցին «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի կողմից ԳՄՀԸ-ին ներկայացված ծրագրային հայտ-առաջարկները:

Դրանցից առաջինի՝ «18 բազմաբնակավայր համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակում» ծրագրի մեկնարկը տրվեց ս.թ. մայիսի 25-ին, եւ այն տեւելու է շուրջ 5 ամիս: Ծրագրի իրականացման արդյունքում մշակվելու է բազմաբնակավայր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման ՏԱՊ-ի մշակման եւ կառավարման սոր մեթոդաբանություն (մեթոդական ուղե-

## ԾՐԱԳՐԵՐԻ ՄԵԿՆԱՐԿ՝ ՆՈՐ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ



ցույցի տեսքով), այդ ոլորտում ուսուցանվելու են 18 համայնքների աշխատակազմերի երեքական ներկայացուցիչներ, ինչպես նաեւ գործնականում մշակվելու են այդ համայնքների 2018թ. ՏԱՊ-երի նախագծերը եւ ներկայացվելու են՝ նախ հասարակության լայն շերտերի հանրային քննարկումներին եւ այնուհետ՝ համայնքի ավագանու քննարկմանը եւ ընդուն-

մանը: Դրանցից երկրորդի՝ «Աջակցություն սոր ձեւավորված 18 բազմաբնակավայր համայնքների 2018թ. ծրագրային բյուջեների մշակմանը» ծրագրի

մեկնարկը տրվեց ս.թ. հունիսի 15-ին, եւ այն տեւելու է շուրջ 8 ամիս: Այս ծրագիրը նախորդի տրամաբանական շարունակությունն է, որի իրականացումից ակնկալվում են հետեւյալ հիմնական արդյունքները՝

- Ազգային եւ տեղական մակարդակներում ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունների, ձեւամուշների, այլ փաստաթղթերի համահունչություն,
- ԾԲ-ի մշակման եւ կառավարման վերաբերյալ պատրաստված ուսուցման նյութեր (մոդուլներ) եւ ուսուցման սեմինարներում վերապատրաստված 18 համայնքների ներկայացուցիչներ՝ ըստ առանձին փնջերի,
- 18 համայնքների 2018թ. ԾԲ-ների նախագծեր եւ դրանց հակիրճ տարբերակներ,
- 18 համայնքների 2018թ. ԾԲ-ների նախագծերի հանրային քննարկումներ եւ դրանց արդյունքում լրամշակված վերջնական նախագծեր,
- Համայնքների ավագանիների կողմից քննարկված եւ ընդունված՝ համայնքների 2018թ. ԾԲ-ներ:

«Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ փորձագիտական թիմ

# ՉՍՏԱՑՎՈՂ ԳՈՐԾ ՉԿԱ, ՊԱՐԶԱՊԵՍ ՊԵՏՔ Ե ՆԿԻՐՎԵԼ



Համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2016թ. հունիսի 17-ի ՀՀ ՀՕ-100-Ն օրենքի, նախորդ տարի կազմավորվեցին մի քանի բազմաբնակավայր համայնքներ, որոնցից մեկն էլ Սյունիքի մարզի Տեղ համայնքն է: Այն իր մեջ ընդգրկում է Տեղ, Արավուս, Խնածախ, Խոզնավար, Կոռնիձոր, Վաղատուր եւ Զարաշեն բնակավայրերը:

Իսկ թե ինչպիսին է այսօր համայնքում բարոյահոգեբանական մթնոլորտը, ինչ աշխատանքներ են կատարվել, առաջիկա ինչ անելիքներ կան, «Համայնք-ՀամաՏեղին» ներկայացրեց Տեղ բազմաբնակավայր համայնքի ղեկավար Ներսես Շարունցը:

### Պարոն Շարունց, ի՞նչ փոխեց համայնքների միավորումը մարդկանց կյանքում:

- Ընդամենը մի քանի ամիս է, ինչ ձեռնարկվել է 7 բնակավայրերից կազմված Տեղ բազմաբնակավայր համայնքը՝ բազմաթիվ խնդիրներով եւ բնակչության հոռետեսությամբ:

Ի սկզբանե մարդիկ սխալվում էին, երբ մտածում էին, որ համայնքների միավորումից հետո տարիների ընթացքում կուտակված հարցերը միանգամից պետք է լուծվեն: Ոչ, միանգամից ոչինչ չի լինում, եւ պետք է ժամանակ, հետետեղական աշխատանք: Բնակիչները սխալվում էին, երբ կարծում էին, որ համայնքների միավորումից հետո իրենց գյուղերը կործանվելու են:

Այսօր կարող ենք արձանագրել, որ այս կասկածը մասամբ փարատվել է: Երբ գրուցում եմ բնակիչների հետ ու հարցնում եմ՝ այսօր է շատ գործ արվում ձեր բնակավայրում, թե՞ ամիսներ առաջ, պատասխանում են՝ այսօր: Ժողովուրդը պետք է շոշափելի արդյունք տեսնի, քանի դեռ նա սեփական մաշկի վրա չի գաղտնի խոշորացման առավելությունը, նրան չեն համոզի:

Կարճ ժամանակում մեր կատարած աշխատանքները ոչ միայն մարդկանց մտածելակերպն են փոխել, այլեւ՝ նպաստելու են բնակավայրերում դրական տեղաշարժին, կյանքի աշխուժացմանը:

Մարդիկ սխալվում էին նաեւ այն հարցում, երբ կարծում էին, որ խոշորացումից հետո փոքր բնակավայրերն անտեսվելու են: Այսօր իմ ամբողջ ուշադրությունը կենտրոնացված է ամենահոգսաշատ բնակավայրի՝ Խնածախի վրա: Հիմնարկման օրվանից մինչ այժմ այստեղ փողոցները հազվադեպ են վերանորոգվել, իսկ այսօր բարեկարգում ենք բոլոր փողոցները, բնակավայրն արդեն գազաֆիկացվել է, իսկ մարտի 8-ին բացվեց նաեւ մանկապարտեզը, ուր հաճախում է 25 երեխա,

ավելին՝ երեխաների թվի աճի դեպքում պատրաստ ենք բացել եւս մեկ խումբ:

Տարիներ շարունակ այս բնակավայրի գերխնդիրը եղել է խմելու ջուրը: Այսօր արդեն մշակվում է 23 միլիոն դրամ արժույթով ծրագիր (դոնորների, բարերարների միջոցներով եւ համայնքի համակերպումների շնորհիվ), որի շնորհիվ կլուծվի այս հրատապ խնդիրը եւս, եւ բնակավայրը վերջապես կունենա ինքնահոս ջուր:

Արված աշխատանքների կողքին այս բնակավայրում դեռ կան բազում խնդիրներ, եւ այս պահին մտահոգիչ է գրադարանի հարցը. գրադարանն ունի 7000 կտոր գիրք, սակայն շենքը գտնվում է անմխիթար վիճակում, ու մտածում ենք,

Թող տպավորություն չստեղծվի, թե մյուս բնակավայրերն անտեսվում են. ես Տեղում հազվադեպ եմ լինում, այցելում եմ մյուս բնակավայրեր, հետեւում իրականացվող աշխատանքներին, գրուցում բնակիչների հետ:

Այս ամիսների ընթացքում վերանորոգել, գործարկել ենք 4 մանկապարտեզ, շուտով կլուծվի նաեւ Արավուսի նախակրթարանի հարցը: Ի դեպ, այս պահին Արավուսում 30 միլիոն դրամ արժույթով ծրագիր է իրականացվում, եւ վերանորոգվում է կամուրջը: Նախատեսում ենք վերջնական գազաֆիկացնել նաեւ Վաղատուր եւ Խոզնավար բնակավայրերը: Շուտով կվերանորոգվի նաեւ մեր համայնքային կենտրոնը, եւ վերջա-



թե որտեղ տեղակայենք այդ մեծ հարստությունը:

Ինչ վերաբերում է բազմաթիվ քննարկումների տեղիք տված այն հարցին, թե խոշորացման արդյունքում աշխատանքներ կրճատվեցին, ապա ասեմ, որ կունկրետ Խնածախում համայնքապետարանի երեք աշխատակից է կրճատվել, բայց դրա փոխարեն մանկապարտեզում բացվել է 6 աշխատատեղ:


Հուլիսի 2-ից կանոնավոր աղբահանու-

պես կունենանք մեր նստավայրը:

Անելիքներ շատ կան, բայց այսօր մեր նպատակն է զարգացման առումով համեմատաբար հետ մնացած բնակավայրերը բերել հավասարեցնել մյուսներին ու համաբայլ առաջ ընթանալ:

Մեծ համայնք է, հոգսերն ու խնդիրները շատ են, բայց՝ չստացվող գործ, անլուծելի հարց չկա, պարզապես պետք է նվիրվել ու աշխատել...

### Ի՞նչ խանգարող հանգամանքների եք



թյուն կիրականացնենք նաեւ Խնածախում, եւ այն կդառնա արդեն 6-րդ բնակավայրը, որտեղ իրականացվում է աղբահանություն:

Ի դեպ, ամիսներ առաջ, երբ նոր էր մշակվել մեր համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը, շատ լրագրողներ թերահավատորեն էին վերաբերվում այս կետին, անգամ զարմանում էին, թե ինչպե՞ս պետք է նմանատիպ փոքրիկ գյուղական բնակավայրերում աղբահանություն իրականացնենք: Ես խոստացա նրանց հարցերին պատասխանել երկու ամիս անց, սակայն մինչեւ այժմ դեռ ոչ մեկը չի դիմել այդ հարցով:

### առավել հաճախ հանդիպում Ձեր գործուներության ընթացքում:

-Առաջինը, որ կուզենայի նշել, դա այն է, որ բնակիչները համախմբված չեն. որքան մարդ՝ այդքան կարծիք, եւ յուրաքանչյուր հարց քննարկելիս դժվարությամբ ենք գալիս ընդհանուր հայտարարի:

Սակայն, ամենաառաջնային խոչընդոտը համայնքային բյուջեն է, որը գոյանում է բնակիչների վճարած հարկերից ու տուրքերից, սակայն մարդիկ դժվարությամբ են կատարում իրենց հարկային պարտավորությունները: Վստահ եմ, որ ժամանակի ընթացքում, երբ մարդկանց

մեջ արմատավորվի այն մտածելակերպը, որ իրենց վճարած գումարով է նաեւ լուծվում համայնքային այս կամ այն հարցը, ապա պարտականությունները կկատարեն ժամանակին:

### Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է լինել բազմաբնակավայր համայնքի ղեկավարի հաջողության գրավականը: Գուցե կառավարման փո՞րճը:

- Բնականաբար, կառավարման փորձը մեծ նշանակություն ունի, բայց հատկապես բազմաբնակավայր համայնքի ղեկավար ընտրելիս ժողովուրդը պետք է երկար մտածի: Եթե սրտացավ ու նվիրված ղեկավար չընտրվեց, ապա այդ համայնքը դատապարտված է կործանման:

Շաբաթվա 2-3 օրը Երեւանում բազմաթիվ գերատեսչությունների դռներ թակելով փորձում եմ բնակիչներին հուզող հարցերին պատասխաններ գտնել: Երբ ինչ-որ հարց լուծելուց հետո տեսնում եմ մարդկանց գոհունակ ժպիտը, մոռանում եմ բոլոր դժվարությունները, նաեւ թեթեւություն զգում, որ այս դեպքում եւս բնակիչն իրեն խաբված չզգաց:

### Պարոն Շարունց, ապակենտրոնացումից հետո պատրաստ եք ստանձնել այլ լիազորություններ եւս:

- Արքիմեդն է ասել. «Տվեք ինձ հենման կետ ու ես կտեղաշարժեմ Երկիրը»: Հիմա ես ասում եմ. տվեք ինձ ֆինանսական միջոցներ, եւ ես կստանձնեմ համայնքիս վերաբերող ցանկացած լիազորություն: Այսօր մենք ունենք համախմբված աշխատակազմ, կայացած ավագանի, որի անդամները վիճում են ամեն հարց քննարկելիս, բայց ես միայն ուրախ եմ դրա համար, քանի որ դրանից է ծնվում ճշմարտությունը: Ի դեպ, ավագանու կազմում երեք կին անդամ ունենք, ունենք աշխատող, բանիմաց վարչական ղեկավարներ, ովքեր սրտացավորեն եւ մոտենում ամեն մի խնդրի ու չեն խուսափում կատարել իրենց պարտականությունները:

Վերջերս ինձ դիմեց Խնածախի վարչական ղեկավարն ու խնդրեց ազատել իրեն՝ պատճառաբանելով, որ չի կարող աշխատել նման խիստ ռեժիմով՝ ընտանեկան հանգամանքներով պայմանավորված: Նրա փոխարեն նշանակվեց նոր վարչական ղեկավար: Չնայած այն հանգամանքին, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, ու նոր վարչական ղեկավարին կարող էի նշանակել իմ հայեցողությամբ, այդուհանդերձ կազմա-

կերպվեց հանրային քննարկում, եւ բնակչության հավանությանն արժանացած թեկնածուն նշանակվեց վարչական ղեկավար: Սակայն՝ 6-ամյա փորձաշրջանով, որից հետո միայն, իր պարտականությունները կատարելու դեպքում, կհաստատվի այդ պաշտոնում:

Ես կարծում եմ, որ չպետք է վախենալ համայնքների խոշորացումից, լրացուցիչ պարտավորություններ, լիազորություններ ստանձնելուց, ընդամենը պետք է մարտահրավերներին ճիշտ դիմակայել, մշակել ճիշտ ռազմավարություն եւ անշեղորեն ու հաստատակամ ընթանալ առաջ:

**Պետականության կորստի ազդեցությունը համայնքի ինքնավարության վրա**

Հայաստանի քաղաքները անազափ ծանր հարված են ստացել IV դարավերջին, երբ Շապուհ թագավորը, նվաճելով Հայաստանը, զգալի թվով քաղաքային բնակչություն է բռնագաղթեցրել Պարսկաստան: V դարում Հայաստանը մասնատվել է Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև: Այս դարաշրջանից սկսած՝ Հայաստանում նոր քաղաքական եւ տնտեսական իրավիճակ է ստեղծվել, որը չէր կարող չանդադրաբար համայնքների ինքնավարությանը եւ ազատ ռազմիկի՝ իր համայնքի ներսում քիչ թե շատ ունեցած իրավունքներին:

Հայաստանի բյուզանդական հատվածը դարձել է Բյուզանդիայի «արեւելյան պրովինցիաներից» մեկը: Այստեղ նախ պետական կառավարման կարգն է սկսել փոխվել: Բյուզանդիայի կայսրերը հրապարակել են օրենքներ եւ իրականացրել մեծածավալ գործողություններ, որոնք ուղղված են եղել Արեւմտյան Հայաստանում պետական կարգերի ոչնչացմանը: Այսպես, «Քաղաքացիական վերակառուցման ռեֆորմի» (536թ.) իրականացման արդյունքում Արեւմտյան Հայաստանում վարչատարածքային արմատական փոփոխություններ են կատարվել եւ ըստ էության փշրել ստեղծված յուրահատուկ հասարակական քաղաքական կարգը: Այս նպատակին է ուղղված եղել նաեւ «Հայ ընտանիքի ժառանգական իրավունքը», որով մասնատվել է իշխանների կալվածքների ամբողջականությունը, եւ թուլացել իշխանների իրավական դիրքը:

Ինչ վերաբերում է ազատ համայնական գյուղացիությանը, ապա սկզբնական շրջանում բյուզանդական կառավարությունը աշխատել է պահպանել այն՝ որպես հարկատու միավորի:

Ի տարբերություն կախյալ ռազմիկների, որոնց հարկերը իրենց տերերն են վճարել, գյուղական համայնքում շարունակել է գործել համապարտ երաշխավորության եւ պատասխանատվության սկզբունքը: Ամբողջ համայնքը պարավոր է եղել պետության կողմից սահմանված հարկերը վճարել՝ անկախ այն բանից, որ գյուղացիների մի մասը հեռացել էր գյուղից, կամ հողերի մի մասը չէր մշակվում: Գյուղը պարտավոր է եղել մշակել ամայացած հողերը եւ նրանց համար վճարել հարկեր: Համայնքի ներքին ինքնավարության տեսանկյունից նաեւ ուշագրավ է այն փաստը, որ համայնքի առանձին անդամների միջեւ պետությունը ոչ մի միջամտություն չի գործադրել: Համայնքն ինքն է սահմանել իր յուրաքանչյուր անհամի վճարելիք հարկի չափը:

Աճող հարկերից խուսափելու նպատակով V-VI դարերում գյուղական համայնքները սկսում են հանձնվել ուժեղ մարդկանց հովանավորությանը՝ այսպես կոչված «պատրոնատին»: Պատրոնի պաշտպանության տակ անցնող

# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

**«Համայնք-Համայնք» ամսաթերթը շարունակում է իր ընթերցողին ներկայացնել տեղական ինքնակառավարման՝ հայկական մոդելների մասին՝ Արեւիկ Հարությունյանի «Պանկուից մեր օրերը» եզակի աշխատության ուշագրավ էջերը:**

ազատ համայնականը, ճիշտ է, ազատվում էր հարկերից, սակայն կորցնում էր իր սեփականությունը, իսկ հետո նաեւ՝ ազատությունը:

Բյուզանդական Հայաստանում գործող օրենսդրությունից հատկապես «Կոլոնատի» եւ «Շտրունի»-ի օրինակից ռեֆորմներն են հարվածել համայնքներին, նրանց ինքնավարությանը եւ իրավագրվել շինականին: Արեւմտյան Հայաստանում VI դարից քաղաքացիական իրավունք է ստանում շինականի նոր կարգավիճակի՝ «կոլոնատի» համակարգն իր երկու տարբերակով՝ ազատ եւ ամրացած: Իրավական տեսակետից կոլոնը համարվում էր անձնապես ազատ: Նա ուներ իր հողակտորը եւ եկամտի զգալի մասը տալիս էր տիրոջը: Ազատ կոլոնները փաստորեն հողի ազատ վարձակալուներն էին: Սակայն եթե վարձակալումը պայմանավորված ժամկետից անցնում էր, եւ կոլոնը ստանձնած պարտավորությունները կատարած վեր լինում, ապա գրկվում էր արձակված հողից հեռանալու իրավունքից եւ ամրացվում էր հողին: Հողատերերը հենց դրան էլ ձգտում էին եւ իրենց հաշիվները դասավորում էին այնպես, որպեսզի կոլոններին անելանելի դրության մեջ դնեն եւ մշտապես ամրացնեն հողին:

VIII դարում բյուզանդական Հայաստանի համար հրապարակվում է «Շտրունի» օրինակը, որտեղ հատուկ մաս կար հողատերերի եւ ազատ գյուղական համայնքների փոխհարաբերությունների մասին: «Այս օրենքը, որն ամբողջությամբ ծառայեցված էր հողատերերի օգտին եւ ի վնաս գյուղական համայնքների, շուտով ոչնչացրեց եղած ազատ գյուղական համայնքները», - մատնանշում է պրոֆեսոր Մելիք Բախշյանը: Համայնքների անդամները՝ ծխերը, աստիճանաբար կախման մեջ էին ընկնում աշխարհիկ եւ հոգեւոր հայ ու բյուզանդացի հողատերերից եւ վերածվում կոլոնների: Համայնքների քայքայմանը նպաստում էին նաեւ քաղաքներում կենտրոնացած բյուզանդական բանակի ծախսերը եւ ժողովրդից գանձվող հարկերի ու պարհակների աճը:

Այս գնահատականը չի կարող տարածվել ողջ բյուզանդական Հայաստանի համար: Զանի որ բյուզանդական Հայաստանը իրենից ներկայացնում էր ամենատարբեր աշխարհագրական դիրքեր ունեցող ներկայմասեր, որտեղ տեղանքի եւ սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված՝ գյուղացիական ազատ համայնքները խիստ տարբեր են եղել: Անշուշտ, համայնքների քայքայում եւ

նրանց հողատարածքները նախարարների եւ խոշոր հողատերերի կողմից սեփականացնելու գործընթաց եղել է: Սակայն անհնարին է, որ եղած բոլոր համայնքները ոչնչանային:

Ս. Երեմյանն իր «Ձեռական իշխանությունը հին Հայաստանում» աշխատության մեջ կոչում է. «Շինականների եւ նրանց վճարած հարկերի մասին խոսելիս չպետք է մոռանալ, որ VII դարում եւ ընդհանրապես վաղ միջնադարում մեծ թիվ էին կազմում գյուղացիական ազատ համայնքները, որոնք կախման մեջ չէին որքան նախարարից, այլ ենթարկվում էին ուղղակի երկրի տիրակալին, վճարելով սոսկ արքունի հարկերը եւ չունենալով ոչ մի պարհակ գավառի ավատատեր իշխանի հանդեպ»:

Նշված դարաշրջանում քաղաքները դեռեւս շարունակում են մնալ առանձնաշնորհյալ կարգավիճակում: Բնակչության մեծ մասը եղել են քաղաքային ավագանու վերահսկողության ներքո գտնվող միությունների մեջ միավորված արհեստավորներ: Զաղաքները կառավարվել են ինքնավարության կարգով: Զաղաքը կառավարել է քաղաքային ավագանին, որն իրականացրել է վարչա-տնտեսական պարտականություններ: Զաղաքագլուխը կազմակերպել է հարկերի գանձման եւ մայրաքաղաք ուղարկելու գործը, վարել իրավական եւ ոստիկանական պաշտոններ:

Ինչ կարգով են ձեւավորվել քաղաքը կառավարող երկու մարմինները՝ ավագանին եւ քաղաքագլուխը՝ ընտրությունների, թե՛ նշանակմամբ: Այս մասին տեղեկություն չկա: Սակայն եզրակացություն կարելի է անել՝ ելնելով այս ժամանակաշրջանի Հայաստանի իրավական կարգավիճակից: Հայաստանում գործել են երկիրը մասնատած պետությունների օրենքները, ինչի արդյունքում ոչնչացվել է ոչ միայն պետական կառավարման կարգը: Ճիշտ է, պատմական ուսումնասիրություններում չկա տեղեկատվություն այս ժամանակահատվածում համայնքների ինքնավարությանը հասցված որոշակի հարվածների մասին: Սակայն կարելի է վստահորեն եզրակացնել, որ համայնքները եղել են շատ խոցելի, եւ Բյուզանդիայից ու Պարսկաստանից եկող ցանկացած վճիռակող երարմատապես անդրադառնալ համայնքների ինքնավարության վրա:

Կարծում ենք, այս առումով բնորոշ է հետեւյալ հայտնի փաստը: Անաստասիոս կայսեր հրամանով բյուզանդական Հայաստանի քաղաքային ավագանիները գրկվել են հարկերը հավաքելու

իրավունքից: Եվ այդ գործը տնօրինելու համար կայսրը քաղաքներում հաստատել է իր «վինդիկոսների»: Վերջինիս, բնականաբար, չէին մտահոգի քաղաքի կենսագործունեության անհրաժեշտ ծախսերը, այլ է առավելապես կենտաքրքրեր հարկերի տեսքով հայերից հնարավորինս մեծ գումարներ գանձելու եւ դրանք Բյուզանդիա հասցնելու խնդիրը: Անկասկած, կայսեր հրամանը եղել է մտածված քայլի արդյունք, որը լուծել է երկու խնդիր, ուղղվել է Հայաստանում քաղաքների ինքնավարությանը եւ իրավագրվմանը, միաժամանակ բյուզանդական գանձարան բերել հավելյալ եկամուտներ:

Արեւելյան Հայաստանի կառավարման պետական կարգը ներկայացրել է հետեւյալ պատկերը: Արեւելյան Հայաստանը Պարսկաստանի կազմում կազմել է առանձին մարզպանություն: Հայաստանի մարզպանները ենթարկվել են երկրամասերի պատգոսպակին եւ սպարապետին: Նրանք պարտավոր են եղել վճարել արքունիքի կողմից նախապես սահմանված հարկը:

Հայաստանի այս հատվածում, VI դարից սկսած, աշխույժ տարանցիկ առևտրի շնորհիվ քաղաքները զարգացել են, եւ առաջացել նոր քաղաքներ: Որպես առևտրական խոշոր դեր խաղացող քաղաք, պատմիչները մատնանշում են Դվինը: Արտագրվող ապրանքների մասին Անանիա Շիրակացու հետեւյալ վկայությունը թույլ է տվել եզրակացնել Արեւելյան Հայաստանում առկա տնտեսական ապակենտրոնացման փաստի մասին: Շիրակացին Բարձր Հայքում՝ «բյուրեղ» կոչվող թանկագին քարը, Աղձնիքում՝ երկաթ ու գիթորը, Տուրուբերանում՝ պղինձը, Լավթը, երկաթ եւ մեղրը, Կորճեքում՝ գառիկը եւ շահանդակը, Վասպուրականում՝ ձուկը, Արցախում՝ քարախունկը, Այրարատում՝ որդան կարմիր ներկը եւ այլն:

Ինչ է տվել այս տնտեսական ապակենտրոնացումը համայնքներին: Կառավարման եւ իրավական տեսանկյունից՝ ինչ վիճակում են գտնվել նրանք Արեւելյան Հայաստանում, պահպանվել է արդյոք նախկին ինքնավարությունը:


Ըստ պատմական տեղեկությունների, տնտեսական աշխուժացումը ռազմիկի վրա անդրադարձել է միայն աճող հարկերի տեսքով: Պատմիչների վկայությամբ, հենց հարկերի աննախընթաց ծանրացումը, հայ իշխանների իրավունքների ոտնահարումը եւ կրոնափոխության հարկադ-

րանքն էին այն երեք հիմնական պատճառները, որ եղել են Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանում մեկը մյուսին հաջորդող ազատագրական եւ սոցիալական ապստամբությունների դրդապատճառ: Սակայն այս հարցում հոգեւորական պատմիչները շրջանցել են շինականի իրավունքների ոտնահարման փաստը (հատկապես Արեւմտյան Հայաստանում, որտեղ ազատ շինական կորցրել է իր համայնքում նախկինում ունեցած իրավունքները եւ վերածվել կոլոնի): Ըստ խորհրդային պատմագիտության, եկեղեցին նույնպիսի հարստահարող է եղել, եւ սա է պատճառը, որ շինականի իրավունքի ոտնահարումը եկեղեցու կողմից անտեսվել է:

VI-VIII դարերում անմխիթար վիճակում է հայտնվում նաեւ քաղաքացին, քանի որ քաղաքների մեծ մասը պարսկա-բյուզանդական լարված հարաբերությունների արդյունքում վերածվում է ռազմական ճամբարների եւ զրկվում առևտրի տարանցիկ դերից: Այս շրջանում առաջանում է նոր ունեւոր խավ՝ վաշխառուների դասը: Զաղաքացին եւ շինականը աճող հարկերի համար բարձր տոկոսներով դրամ են վերցնում վաշխառուներից եւ չկարողակալով վերադարձնել, ընկնում են ստրկական վիճակի մեջ:

Արաբական տիրապետության ժամանակ (VII-VIII դար) քաղաքները թեեւ ձեւակաւորել համարվել են պետական, սակայն, փաստորեն, ենթակա են եղել կենտրոնական իշխանության կողմից նշանակված ոստիկաններին կամ ամիրաներին: Վերջիններս քաղաքի եւ նրա գավառի նկատմամբ օժտված էին վարչա-քաղաքական, ռազմական եւ տնտեսական իշխանության իրավասություններով: Նրանց են ենթարկվել նաեւ քաղաքի հարկահանները, որոնք կոչվել են «ամիր», եւ շուկայական վերահսկիչները՝ «մուխթախները»: Զաղաքներում հաստատվել է նաեւ դատարան՝ «դադի» գլխավորությամբ: Իսկ մի շարք քաղաքներ անմիջականորեն պատկանել են այս կամ այն իշխանին եւ հանդիսացել վերջինիս նստավայրը: Զաղաքների տերերն իրենց ձեռքում են կենտրոնացրել քաղաքի եւ նրա գավառի ամբողջ իշխանությունը: Միայն դատական իշխանությունն է, որ գտնվել է հոգեւորականության իրավասության ներքո, իսկ տեր իշխանն ունեցել է վերահսկողության իրավունքը:

**Ըստ «Պանկուից մեր օրերը» գրքի Հատվածները տպագրվում են հեղինակի համաձայնությամբ:**



**«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՅՆՔ» ամսաթերթը**  
**Լրատվական գործունեություն**  
**իրականացնող՝ «Համայնքների**  
**ֆինանսիստների միավորում» ՀԿ**  
**Գրանցման վկայական՝**  
**թիվ 03U063471,**  
**տրված՝ 06. 02. 2004 թ.**

Թերթը հրատարակվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային գարգացման գործակալության օժանդակությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (Համայնք) ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետները միմյանից հեղինակներին են եւ պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԿՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ  
**ՎԱՅԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**  
**ՎԱՅՐԱՄ ՇԱՀՄԱՅՅԱՆ**  
**ԱԲՐԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ**  
**ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**  
**ԲՈՒՐՆ ԱԼԿԱՍԱՐԳՅԱՆ**  
**ՀՈՒԹՄԻՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**  
**ԴՎԱԻԹ ՄՈՐԱՐԱՅԱՆ**  
**ԸՆԱՐԻՎ ԱՅՎԱԶՆԻՎԱՆ**  
**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Թողարկման պատասխանատու՝  
**Խմբագիր**  
**ԱՐԵՎԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Մեր հասցեն՝  
**Երեւան, Երվանդ Զոչարի 20,**  
**4-րդ հարկ**  
**Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98**  
**Էլ. փոստ՝ info@cfoc.am**  
**Կայք՝ http://cfoc.am/**

Տպագրված է «Տիգրան Մեծ»  
**հրատարակչության տպարանում,**  
**ք. Երեւան, Արշակունյաց պող. 2**  
**Ծավալը՝ 2 տպագրական մամուլ,**  
**տպաքանակը՝ 2000 օրինակ:**  
**Թերթը տարածվում է անվճար:**